ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հունիսի 10-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հրաչյա Աճառյանի ծննդյան 100-ամյակին։

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Խոսելով մեծանուն լեզվաբանի գիտական հարուստ ժառանգության, մանկավարժական բեղմնավոր գործունեության, գիտական կադրերի պատրաստման գործում նրա անխոնջ վաստակի մասին, ակադեմիկոս Վ. Համբարձումյանն ասաց.

— Հրաչյա Աճառյանը իր ողջ գիտակցական կյանքը, յուրաքանչյուր օրն ու ժամը անմնացորդ նվիրաբերել է իր ժողովրդին և հայրենական գիտության զարգացմանը։ Նրա կյանքը մի վառ օրինակ է բոլոր նրանց համար, ովքեր իրենց նվիրաբերել են գիտությանը։

«Հրաչյա Աճառյանի կյանքը և գիտական գործունեությունը» զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ջահուկյանը։

— Հրաչյա Աճառյանը,— ասաց նա.— եղավ մեր առաջին խոշոր մասնագետ-լեզվաբանը, որը նշանավորեց հայագիտության զարգացման մի ամբողջ շրջան, ի մի բերեց կարևորագույն աշխատանքների արդյունքները, բաց արեց ուսումնասիրության նոր ասպարեզ, մեծ չափով նպաստեց հայագիտության հետագա առաջընթացին։ Զեկուցողը ընդգծեց Հրաչյա Աճառյանի վաստակը հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադրման, բառարանագրության, հայերենի ստուգաբանության, հայ անձնանունների ուսումնասիրության, հայերենի համեմատական և պատմական քերականության, տիպաբանական-զուգադրական հետազոտությունների և այլ բնագավառներում։

Այնուհետև Հրաչյա Աճառյանի կյանքից հուշեր պատմեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ղարիբյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Է. Աղայանը, որոնք Հրաչյա Աճառյանին բնութագրեցին որպես մեծ հարենասերի, գիտնականի և մանկավարժի։

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Հրաչյա Աճառյանի ծննդյան 100-ամյակին էր նվիրված մայիսի 14-ին Երևանի պետական համալսարանի մեծ հանդիսասրահում կայացած գիտական նստաշրջանը։

Ներածական խոսքով նստաշրջանը բացեց համալսարանի ռեկտոր, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։

«Հր. Աճառյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Է. Աղայանը։ Զեկուցողը ներկայացրեց մեծ գիտնականի կյանքն ու գիտական գործունեությունը, խոսեց նրա թողած գիտական ժառանգության հրատապության ու կարևորության մասին, նշելով, որ այն ոչ միայն հայագիտության, այլև հնդեվրոպական լեզվաբանության և ընդհանուր լեզվաբանության համար մեծ արժեք է ներկայացնում։

Բարբառները ուսումնասիրելիս Աճառյանը տարիներ շարունակ հավաքում էր գավառական բառերը, որոնք մեր բարբառների ու ժողովրդա-խոսակցական լեզվի հարստությունն են կազմում, և դրանց հավաքումը, ուսումնասիրությունն ու լեզվաբանական գնահատությունը կարևոր է ոչ միայն հայոց լեզվի պատմական բառագիտության ու բարբառագիտության համար, այլև ժամանակակից հայերենի մշակման ու նրա բառապաշարի հարստացման, ինչպես նաև ազգագրական տեսակետից։ Երկար տարիների ընթացքում իր կուտակած նյութը նա ամբողջացրեց «Հայերեն գավառական բառարան», որն արժանացավ Լազարյան ճեմարանի մրցանակին և հրատարակվեց 1913 թ.։

Իր բարբառագիտական ուսումնասիրությունների մեջ Աճառյանն առաջնորդվում էր պատմա-համեմատական մեթոդի սկզբունքով ու դրանց հմուտ գործադրությամբ։

Զեկուցողը նշեց նաև, որ Աճառյանի թողած գիտական ժառանգության մի մասն է միայն ընթերցողների սեփականությունը դարձել։ Վերջին տարիներին Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը ձեռնամուխ եղավ մեծ հայագետի